

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈԹՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

“Армянский вопрос. Геноцид армян. Библиография литературы на русском языке (1877-1997), Ер., 1998.-316 с.”

Գիտության տարբեր բնագավառների վերաբերյալ մատենագիտական ժողովածուների կազմումն անկասկած ունի շատ կարևոր նշանակություն: Փաստորեն, դրանք ուղեցույց և բանալի են ծառայում տվյալ թեմայի համապարփակ ուսումնասիրության տեսանկյունից: Այս առումով ամենևին չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ մատենագիտություններն առաջին հերթին օգտակար են հենց ուսումնասիրողների համար:

Ակնհայտ է, որ մատենագիտությունների դերն առավել ևս կարևորվում է հատկապես հայագիտության բնագավառում: Այստեղ, սկսած 19-րդ դարից, ստեղծվել է ծովածավալ գրականություն, որից օգտվելու հնարավորությունն հեշտացնելու և այն դյուրին դարձնելու առումով մինչ այժմ ստեղծվել են բազմապիսի մատենագիտություններ՝ թեմատիկ և առանձին ականավոր հայագետների վաստակն ամփոփող տեղեկատվությամբ: Այս պարագան որակի և մատենագիտության հմտության առումով ավելի է շահում, երբ գործին ձեռնարկում են հենց հայագետներն ու փորձված մատենագետները:

Բնական է, երբ հայագիտության ողջ ամսպառ օվկիանոսում թե՛ ծավալի, և թե՛ որակի առումներով աչքի է զարնում առաջին հերթին հայոց ազատագրական պայքարին, Հայկական հարցին և ցեղասպանության պատմությանը մվիրված գրականությունը: Հայոց պատմական ճակատագրի համգամանքների բերումով այս թեմաները միշտ էլ գտնվել և գտնվում են հայ հասարակական-քաղաքական և պատմագիտական մտքի ուշադրության կենտրոնում: Ավելին, պետք է միանգամայն փաստել, որ այս հիմնախնդիրների ուսումնասիրությունը պատմագիտականից զատ ունեն մեծ նույնքան կարևոր հնչեղության քաղաքական նշանակություն՝ քարոզչական և միջպետական փոխհարաբերությունների տեսանկյունից:

Մյուս կողմից, այս պարագան հայերի համար ունի մեծ միջազգային ասպարեզում Հայոց ցեղասպանության փաստի համընդհանուր ճանաչմանը նպաստելուն միտված նշանակություն:

Այս ամենից ելնելով, հիշյալ թեմային առնչվող ցանկացած մատենագիտական աշխատանք միանշանակորեն ողջունելի է: Այդ համգամանքը հատկապես վերաբերում է Պ. Հովհաննիսյանի և Է. Բաբայանի կողմից կազմված «Հայկական հարց,

Հայոց ցեղասպանություն» մատենագիտությանը, որն ընդգրկում է 1877-1997 թթ. ռուսերեն լեզվով հրատարակված գյութերը:

Ամերիկահայ Վահե Աղաբեգյանցի մեկենասությամբ և բարոյական աջակցությամբ դեռ 1993 թ. Երևանում հիմնված ոչ կառավարական հասարակական Ազգային Հարցի և Գեոգրիի Ուսումնասիրման Կենտրոնի հրատարակած այս մեծարժեք աշխատանքը, հենց սկզբից շեշտենք, հիրավի կոթողային և մնայուն մշամակություն ունի:

Մատենագիտության պատասխանատու խմբագիրն ու մերածականի հեղինակը մույնիսկ Պ. Հովհաննիսյանն է:

Մինչ մատենագիտության մերկայացնելն, ամհրաժեշտ է անդրադառնալ Պ. Հովհաննիսյանի հեղինակած «Հայկական հարցի և ցեղասպանության մատենագիտության պատմության շուրջը» մանրամասն և հանգամանալից մերածությանը: Սա փաստորեն թեմայի վերաբերյալ ընդհանուր գծերով, բայց բավականին սպառիչ և հարցի բոլոր կողմերը շոշափող վերլուծություն է:

Պ. Հովհաննիսյանն իրավացիորեն մշում է, որ Հայոց ցեղասպանությանը մկիրված գրականությունը քանակապես և որակապես գերազանցում է հայոց պատմության այլ հիմնախնդիրներին առնչվող ուսումնասիրություններին:

Բնավ պատահական չէ, որ այս թեմայի մկատմամբ ուշադրությունը համատարած է, ընդ որում, մաև հայկական շրջանակներից դուրս:

Մասնավորապես, պետք է հիշատակել այն կարևոր հանգամանքը, որ սույն թեմայի վերաբերյալ կա հսկայական գրականություն ռուսերեն, եվրոպական, արաբերեն, թուրքերեն և այլ լեզուներով: Օրինակ, պրոֆ. Ռ. Սահակյանի հաշվումներով 1900-1960 թթ. միայն Ֆրանսիայում հրապարակվել է մոտ 400 գիրք: Ընդհանուր առմամբ միայն վերջին հարյուրամյակում հրատարակված գրքերի թիվն արդեն գերազանցել է 5000-ը:

Այսուհանդերձ, ոչ հայերեն գրականության ծովում միանշանակ կարելի է առանձնացնել ռուսերեն լեզվով ուսումնասիրություններն ու գյութերը: Պատճառը պարզ է: Ռուսական հասարակական-քաղաքական միտքն ու գիտական աշխարհն այս թեմային անդրադառնում էր հրատապորեն և մասնագիտական առնչությամբ:

Ավելին, դժվար է գտնել որևէ ռուսերեն պարբերական, որտեղ շոշափված չլինի հայոց ցեղասպանության հիմնախնդիրը: Միայն այս թեմային անդրադարձած պարբերականների թիվն արդեն անցնում է երեք տասնյակից: Ընդ որում, մման հետաքրքրությունն ամենևին կենտրոնական մամուլով չէր սահմանափակվում: Սկսած զավառականից մինչև մահանգային մասշտաբի թերթերը պարզապես լեցուն էին արևմտահայ կոտորածների և Հայկական հարցի տարբեր արծարծումների վերաբերյալ բազմաբնույթ գյութերով:

Որպեսզի այդ պատկերն ավելի պարզ լինի, բավական է հիշատակել մի փաստ: Դարասկզբին Մանուշակ Բողդանյանը կազմել է ռուսերեն 248 անուն թերթերի և ամսագրերի՝ Հայաստանին և հայությանը վերաբերվող 2586 միավոր հսկայածա-

վալ մյուս պարունակող մատենագիտություն, որն ընդգրկում է միայն 19-րդ դարը: Այդ մեծարժեք մատենագիտությունը, սակայն, չի պահպանվել: Փաստորեն, մերկա գրախոսվող մատենագիտությունը, բարեբախտաբար, այդ կորստի վերականգնման հաջողված փորձ է մաս:

Ռուսական իրականության մեջ Հայոց ցեղասպանության թեմայի մկատմամբ հետաքրքրությունը շարունակվում է մինչև 1920-ական թվականների կեսը: Դրանից հետո համատարած կերպով խորհրդային պատմագիտության մեջ ընդհանուր առմամբ գերիշխում էր Ա. Միլլերի թուրքամետ պատմագիտական դպրոցը: Այս կապակցությամբ ճիշտ է մկատում Պ. Հովհաննիսյանը, երբ այդ երևույթը բացատրում է խորհրդային համակարգի համար հիմնախնդրի ոչ ձեռնառու լինելով: Տարակուսելի է, սակայն, մույնիսկ 1967 թ. հրատարակված և հատուկ ցեղասպանությանը մվիրված Մ. Անդրյուխինի գրքում հայերի մասին հիշատակություն անգամ չկա:

Փաստորեն, ռուսերեն լեզվով պատմագիտական գրականություն ստեղծվում էր միայն Հայաստանում, այն էլ 1965 թ. Հայոց եղեռնի հիմնամյակից հետո: Ի դեպ, այդ հանգամանքն ուներ մաս քարոզչական մշանակություն: Բուն խորհրդային պատմագիտության մեջ փոփոխություններ սկսվում են միայն 1980-ական թվականներից:

Գրախոսվող աշխատանքում ընգրկված են միայն Բեռլինի կոնգրեսի գումարումից հետո կատարված դեպքերին առնչվող մյութերը, այսինքն, մատենագիտության սկզբնակետ է ընդունվում Հայկական հարցի միջազգայնացումը:

Ներածականում Պ. Հովհաննիսյանն ընդհանուր գծերով մերկայացնում է թեմայի շուրջ առկա մատենագիտական աշխատանքները:

Առաջինը իրավամբ դոկտոր Սալմասյանի հուչակավոր «Հայկական մատենագիտություն»-ն է, ուր ամփոփված են միայն եվրոպական լեզուներով գրականությունը: Այս աշխատանքները մինչ այժմ էլ շարունակվում են սփյուռքում: Պ. Հովհաննիսյանն ըստ արժանվույն է գնահատում Լևոն Վարդանի, Ռիչարդ Հովհաննիսյանի, Վրեժ Ներսիսյանի, Տիգրան Գևորգյանի և այլոց վաստակը: Վերջիններս, սակայն, գրեթե չեն անդրադարձել ռուսերեն լեզվով մյութերին:

Իսկ արդեն այդ ուղղությամբ համակարգված աշխատանքների սկսումը կապված է վաստակաշատ մատենագետ Հակոբ Ամասյանի անվան հետ: 1977 թ. հրատարակված ցեղասպանությանը և Հայկական հարցին մվիրված մրա համապարփակ մատենագիտությունն ամփոփում էր 662 միավոր մյութ՝ 1877-1977 թթ. ժամանակահատվածն ընդգրկող:

Հայկական հարցի լավագույն գիտակներից Արման Կիրակոսյանը հրատարակել է մի քանի մատենագիտություններ, այդ թվում՝

1. 1890-1900 թթ. ընդգրկող (190 միավոր մյութ),

2. 1878-1983 թթ. ընդգրկող (754 միավոր մյութ):

Վերջինս բաժանված է չորս թեմատիկ բաժինների՝ 1878-1894 թթ., 1894-1914 թթ., 1914-1920 թթ., 1920-1983 թթ. ժամանակահատվածներով: Սա, փաստորեն, արդեն ծավալի առումով և զուտ մասնագիտական տեսանկյունից ավելի կատարյալ աշխատանք էր:

Ներկայացվող աշխատանքում կազմողներն օգտվել են ինչպես այդ, այնպես էլ Թուրքիայի վերաբերյալ ուսերեն մատենագիտություններից:

Պ. Հովհաննիսյանը ներածականում կարևորում է թուրքերեն լեզվով աշխատությունների շուրջ առկա մատենագիտական աշխատանքները՝ հատկապես Լևոն Վարդանի մեծարժեք գործը: Վերլուծվել են նաև արված եռալեզու (հայերեն, անգլերեն, ռուսերեն) մատենագիտությունները: Այս շարքում հատկապես հիշատակելի է Տիգրան Գևորգյանի Կահիրեում 1995 թ. հրատարակած մատենագիտությունը, ուր ամփոփված են հայերեն (1332 միավոր), եվրոպական լեզուներով (1132 միավոր) և Հ. Ամասյանի կազմած ռուսերեն (662 միավոր) մյուսերը:

Այսպիսով, առկա էին տարբեր լեզուներով և ժամանակային կտրվածքով բազմաթիվ մատենագիտություններ: Առաջին հայացքից կարող է թվալ, որ հավանաբար դրանք արդեն բավարար էին ուսումնասիրողների պահանջների համար: Սակայն, ի պատիվ գրախոսվող աշխատանքի կազմողների, հարկ է փաստել, որ նրանց կազմած մատենագիտությունը մեծ առաջընթաց է: Ավելին, այդտեղ ներկայացված են նույնիսկ թեմայի հետ առնչվող կապ ունեցող, բայց անհրաժեշտ մյուսեր ևս: Մյուս կողմից, կազմողները խելամիտ են վարվել, երբ ամփոփել են նաև Արցախյան շարժումն արտացոլող մյուսերը:

Մատենագիտությունը բաղկացած է երկու մասից՝ գրքեր (523 միավոր) և հոդվածներ (1837 միավոր), իսկ ընդհանուր առմամբ արտացոլված են 2360 միավոր մյուսեր:

Ջուտ ծավալի առումով այս մատենագիտությունն արդեն ավելի քան երեք անգամ գերազանցում է մինչ այժմ ամենամեծը համարվող Ա. Կիրակոսյանի աշխատանքը:

Ինչ խոսք, չնայած այս փաստին, այնուամենայնիվ այս մատենագիտությունը լիակատար սպառիչ չէ, ինչը պատշաճորեն ընդունում է Պ.Հովհաննիսյանը: Հավանաբար ամենաբացահայտ իրավունք է տալիս բարձր գնահատել աշխատանքը: Ավելին, արխիվային վավերաթղթերի բոլոր ժողովածուները ներկայացված են բացված բովանդակությամբ՝ Անդրանիկի, գերմանական և ռուսական աղբյուրների, Լեոնասյան Ղարաբաղի, Մ. Ներսիսյանի կազմած և այլն:

Ի պատիվ կազմողների պետք է մշել, որ գրախոսվող գործը Ղարաբաղի հարցի վերաբերյալ առկա լավագույն մատենագիտությունն է:

Մյուս կողմից, բազմաթիվ են այն մյուսերը, որոնք ոչ միայն մատենագիտական հազվագյուտ օրինակներ են այժմ, այլև՝ ուսումնասիրողների կողմից գրեթե չբացահայտված մեծ չեն ընդգրկվում: Այս առումով, ներկա մատենագիտությունն ունի կարևոր ուսուցողական բնույթ: Ավելին, մշակված են այնպիսի պարբերականներ,

որոնք վաղուց չեն օգտագործվում հայ պատմագիտության կողմից, չնայած դրանց պարունակած մյուսերի հարստությանը:

Թեպետ ընդհանուր առմամբ մատենագիտության արժեքներն այնքան շատ են, սակայն, հենց այս աշխատանքի բուն իսկ շահերից ելնելով, հարկ ենք համարում կատարել որոշակի դիտողություններ:

Ա. Կադիշևի գրքի բովանդակությունը բացված է, երբ մատենագիտության մեջ կան բազմաթիվ բացման ավելի արժանի ուսումնասիրություններ:

Ցանկացած մատենագիտություն հետապնդում է առաջնահերթ նպատակ՝ հնարավորինս հեշտացնել հավաքված մյուսերից ընթերցողի օգտվելը: Այս առումով, շատ կարևոր է աշխատանքին կցված անձնանունների և անհեղինակ գործերի ցանկը: Սակայն, մատենագիտությունն է՛լ ավելի կշահեր, եթե այն ունենար թեմատիկ-բովանդակային մանրամասն ցանկեր: Մասնավորապես, 2360 միավոր մյուս պարունակող մատենագիտությունում բավականին դժվար է գտնել կոնկրետ հարցի վերաբերյալ գրականություն: Այս կապակցությամբ հիշենք, որ, օրինակ, Ա. Կիրակոսյանն իր աշխատանքը բաժանել էր չորս ժամանակային հատվածների՝ ինչ-որ չափով դյուրին դարձնելով ընթերցողի գործը:

Փաստորեն, բովանդակային ցանկի բացակայությունն է միայն էական թերին, չնայած այս թեմայով յուրաքանչյուր ուսումնասիրող պարտավորված է ընդհանուր առմամբ պատկերացում կազմել ողջ գրականության շուրջ:

Ներկա մատենագիտությունը հայագիտության բնագավառում այն հազվագյուտ նախատիպն է, որ կարող է սկիզբ լինել ավելի մեծ աշխատանքի: Այս մատենագիտության մտադրությամբ այժմ անհրաժեշտ է ձեռնարկել Հայկական Հարցի և Հայոց ցեղասպանության համահավաք մատենագիտությունների մշակմանն ու հրատարակմանը՝ հայերեն, անգլերեն, ֆրանսերեն, թուրքերեն, արաբերեն և այլ լեզուներով:

Անկասկած միշտ պետք է գիտակցել, որ մամա մատենագիտությունների գոյությունն իսկ ինքնըստինքյան 1915 թ. Հայոց եղեռնի ապացույց է: Այսինքն, կարևորագույն այս մատենագիտություններն ունեն զուտ պատմագիտական և արդի քաղաքական մեծ նշանակություն:

Հենց վերոշարադրյալ առումներով Պ. Հովհաննիսյանի և Է. Բաբայանի կատարած շնորհակալ վաստակը այդ հանգամանքի լավագույն առհավատչյան է:

ԱՎԱԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ